ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 2.

ԵՊՀ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

09 սեպտեմբերիի 2022թ.

Նախագահ Մ.Ա.Զաքարյան

Քարտուղար Ք.Վ.Օթարյան

Ներկա էին խորհրդի 15 անդամներից 14 անդամները և Ծ/ԻՏ ամբիոնի դոցենտ,տգթ. , Ռ. Յոլչյանը:

Ֆակուլտետի խորհրդի նիստը բացեց և օրակարգը ներկայացրեց ֆակուլտետի դեկանի ժ/պ, խորհրդի նախագահ Մ.Ա.Զաքարյանը:

ՕՐԱԿԱՐԳ

1) *Ամբիոնի 2022-23 ուս տարվա տարեկան աշխատանքային պլանի քննարկում և հաստատում:*

2) «Ինֆորմատիկա /Համակարգչային գիտություն/» մասնագիտության IV կուրսի *ավարտական աշխատանքների թեմաների քննարկում և հաստատում:*

3) *Հաստատել առաջատար բուհերի և գիտահետազոտական կենտրոնների հետ համատեղ նախագծեր իրականացնելու ուղղությամբ մշակված կարգերը:*

Առցանաց քվեարկությամբ՝ 14 կողմ 0 դեմ, 0 ձեռնպահ համամասնությամբ որոշվեց

Որոշում՝ 1/1

- **Հաստատել նիստի օրակարգը:**

Օրակարգի առաջին, «Ամբիոնների 2022-23 ուս տարվա տարեկան աշխատանքային պլանի քննարկում և հաստատում», հարցի վերաբերյալ զեկուցումով հանդես եկան Ծ/ԻՏ ամբիոնի վարիչ Ա. Հովակիմյանը, ԸՄԲ ամբիոնի վարիչ Գ. Սիմոնյանը: Զեկուցողները նշեց,ին որ ամբիոնների 2022-23 ուս տարվա տարեկան աշխատանքային պլանը կազմված է ըստ մասնաճյուղի 2022-2026 ուս. տարիների ռազմավարական ծրագրի:

Գործընթացի կազմակերպումը ներկայացված է ըստ ամիսների, կազմված է նաև ամբիոնների նիստերի ժամանակացույցը՝ օրակարգի հարցերով:

Արտահայտվեցին

, Մ. Զաքարյանը, Մ. Ճաղարյանը, Ք. Օթարյանը:

ՈՐՈՇՈՒՄ 1/2

Բաց քվեարկությամբ՝ 14 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, որոշվել է.

Ֆակուլտետի 2022-23 ուստարվա աշխատանքային պլանը ներկայացնելու տնօրենության հաստատմանը:

Օրակարգի երկրորդ՝ «Ինֆորմատիկա /Համակարգչային գիտություն/» մասնագիտության IV կուրսի ավարտական աշխատանքների թեմաների քննարկում և հաստատում» հարցի վերաբերյալ զեկուցումով հանդես եկավ Մ. Զաքարյանը:

Զեկուցողը ներկայացրեց, որ երկու ամբիոնների IV կուրսի ավարտական աշխատանքների թեմաները ներկայացված են, բայց անհրաժեշտ է, որպեսզի անոտացիաները ներկայացվեն թեմաների հետ միաժամանակ:

Արտահայտվեցին.

Ա. Հովակիմյանը, Գ. Սիմոնյանը, Գ. Սարգսյանը:

Ա. Հովակիմյանը ներկայացրեց, որ աշխատանքները պլանավորված են ուսանողների հետ կանցկացվի հանդիպում, կներկայացվի ավարտական

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում բակալավրի ավարտական աշխատանքի պատրաստման և գնահատման կարգը(25.12.2020 թ.)

ՈՐՈՇՈՒՄ 1/3

Բաց քվեարկությամբ՝ 14 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, որոշվել է.

Հաստատել «Ինֆորմատիկա /Համակարգչային գիտություն/» մասնագիտության IV կուրսի ավարտական աշխատանքների թեմաները։

Օրակարգի երրորդ՝«Առաջատար բուհերի և գիտահետազոտական կենտրոնների հետ համատեղ նախագծեր իրականացնելու ուղղությամբ կատարված գործունեության ներկայացում» հարցի վերաբերյալ զեկուցումով հանդես եկավ Ռ. Յոլչյանը։ Զեկուցողը ներկայացրեց, որ համատեղ նախագծեր իրականացնելու նպատակով կապ է հաստատել Զելինոգրադի ազգային հետազոտական համալսարանի՝ МИЭТի, միջազգային հարաբերությունների բաժնի հետ։ Առաջարկել է կնքել փոխադարձ այցելությունների, գիտահետազոտական թեմաների համատեղ իրականացման հուշագիր, իսկ նրանց կողմից պատասխան նամակով առաջարկ է ստացել կնքել փոխադարձ այցելությունների, գիտահետազոտական թեմաների համատեղ իրականացման պայմանագիր։ Այդ ուղղությամբ տարվում են համապատասխան աշխատանքներ։

ՈՐ ՈՇՈՒՄ 1/4

Բաց քվեարկությամբ՝ 14 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, որոշվել է.

ընդունել ի գիտություն։

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ_____ Մ.Ա. ԶԱՔԱՐՅԱՆ

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ_____Ք.Վ.ՕԹԱՐՅԱՆ